

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 23 ՄԱՅԻՍ, 1931

ԹԻԻ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԴԷՊԻ ԵՏ ԹԷ ՅԱՌԱՋ

ՎԵՐ. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅ ԿԻՆԵՐ

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

ԿՆՈՋ ԱՆՈՒՆԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ԹՐԳՄ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՄԵՐ ՄԻԱԿ ՔԱՐՈՋԻՉԸ

Ս. ԱՅԱՆՕՂԼՈՒ

ՈՒՐԱՐՏԱՑԻՔ

Կ. ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՔԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՂԷՊ

ՆՈՐ ԱԻԵՏԱՔԵՐ

Արսունսէր՝ Վեր. Կ. Յարուքիւնեան
Խմբագիր՝ Տիգրան Ճ. Խրոյրեան

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգինն է 150 դրու-
սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս
տուար՝ ուրիշ բոլոր հրկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն զըր-
կուիր եթէ այդ մասին փափաք չյայտ-
նուի յօդուածագիրներու կողմանէ. չհը-
րատարակուող յօդուածներու համար
պէտք է զրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղ-
թին մէկ էջին վրայ մեկանով, գիւրըն-
թեռնի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առա-
ջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն
երբ փոփոխութեան ենթարկուի ան:

ԶԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ ՏՈՒՆԻՔ
ՆՈՐ ԱԻԵՏԱՔԵՐԻ

ԾԱՆՈՒՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատահական ծանուցումներուն հա-
մար իւրաքանչիւր տողին գինն է 10 դր-
սուրիական. վեցամսեայ և աւելի եր-
կարատե ծանուցումներու պայմանները
հասկնալու համար գիտել «Նոր Աւետա-
բեր»-ի, B. P. 287, Alep.

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Գէորգ Խաչերեան, որ կը կարծուի
Իսկէնտէրուն ըլլալ, Մարտի 1928-
29 թ տարւոյն տեղեկագրին համեմատ (էջ
30 նուիրատուներու ցանկ): Կը խնդրուի
ճշգրիտ տեղեկութիւն հաղորդել

Նիքարայի Աւետիս Խաչերեանի

Հաղագործ ի Լարիսա

Յունաստան

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

ԾԱՐՈՒԹԻՒՆ ՎՈՅՎՈՏԵԱՆ, 23-24 տա-
րեկան, ԱԼԻՔՍԱՆ ՎՈՅՎՈՏԵԱՆ 20-21
տարեկան, իրենց հօրը անունը Յակոբ,
Իգլիտ Ատաբաղարի Ս. Կարապետ թա-
ղէն: Փնտռողն է իրենց մայրը Մարիամ
Համբարձումեան (նախկին Գարապա-
ճագեան) ներկայիս Մարիամ Ալաճաճը-
եան:

Mariam M. Aladjadjian
Paralia Parapighmata
CALAMATA
Grèce

ՍՏԱՑԱՆՔ

ՄՇԱԿ անկախ հայաթերթ ազգա-
յին, քաղաքական, գրական: Կը հը-
րատարակուի շաբաթը երկու անգամ.
տարեկան բաժնեգին՝ 3.00 տուար.
Հասցէ.— P. O. B. 1176, Fresno, Calif.
U. S. A.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 23 ՄԱՅԻՍ, 1931

ԹԻԻ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

«Աստուած Եկեղեցիին մէջ դրաւ առաքեալներ, մարգարէներ, վարդապետներ... կառավարութիւններ... Միթէ ամէնը առաքեալներ են. միթէ ամէնը մարգարէներ են, միթէ ամէնը վարդապետներ են...» Ա. Կորն. 12. 7-10 և 28-30:

Առաքելական դարուն իսկ Քրիստոնէական Եկեղեցիին մէջ տարբեր գործեր կատարող գործիչներ կային, որոնց մէկ թւումը կը կատարէ Պօղոս Առաքեալ վերի համարներուն մէջ: Մեր նպատակէն դուրս է հոս յայտնել թէ յիշուած քրիստոնէական պաշտօններուն յոյժը, իմաստը ի՞նչ էր առաջին դարու Եկեղեցիին կամ զանոնք յիշող Պօղոս Առաքեալի հասկացողութեան համեմատ: Բաւ է հոս յիշել թէ տարբեր կարողութիւններով, Առաքեալին լեզուով տարբեր շնորհներով, օժտուած մարդիկ իրենց մասնաւոր բաժինը կը բերէին Եկեղեցիին ընդհանուր գործունէութեան, անոր նպատակին իրագործման համար:

Ներկայ Քրիստոնէական Եկեղեցիին գործունէութեան եթէ ոչ բոլորը գտնէ՞ական մասերը կրնանք ըսել թէ կը կազմեն հետեւեալները, — աւետարանչութիւն, վարդապետութիւն, մարգարէութիւն, հովուութիւն եւ վարչապատկութիւն:

Աւետարանիչը էսպէս այն գործիչն է որ Յիսուս Քրիստոսով փրկութեան ա-

ւետիսը կը հրապարակէ ամէն միջոցներով, բեմով, մամուլով, անհատական խօսակցութեամբ եւ կեանքով: Աւետարանիչը խորապէս գիտակից է միշտ մահացուցիչ ազդեցութեան, ան կ'զգայ իր սրտին վրայ ծանրօրէն ճնշող անոր ներկայութիւնը, և ներշնչեալ բաւերով, հրեղէն լեզուով, հոգեցունց ոյժով բայց կարեկից շեշտով մարդերը կը հրաւիրէ խաչեալ և յարեալ Փրկչին՝ նոր մտքը ըլլալու համար:

Վարդապետը այն հոգևոր գործիչն է որ հոգևոր կեանքը, հոգևոր ճշմարտութիւնները, Աստուծոյ Խօսքը ժողովուրդին կը բացատրէ, կը մեկնէ, կը սորվեցնէ, կը պարզաբանէ, անոր հասկընալի լեզուով մը: Քրիստոնեային միտքը կ'ընդլայնէ, կը լուսաւորէ և այս կերպով հոգևոր կեանքը կը խորունկեցնէ և կ'ամրացնէ:

Մարգարէն այն գործիչն է որ հոգևոր աշխարհէն նոր լոյսեր կը բերէ, աստուածային նոր պատգամներ կը հաղորդէ, մոռցուած կամ անտեսուած ճշմարտութիւնները երևան կը հանէ, հոգևոր աշխարհին մէջ նոր երկիրներ կը գրաւէ, նոր գիւտեր կ'ընէ:

Աւետարանիչը նոր կեանքի արթնութեան կը հրաւիրէ, վարդապետը տեսականութեան դրոշմով կը կնքէ այդ նոր կեանքը, մարգարէն կը բարձրացնէ զայն: Քրիստոնէական բեմը այս երեք տեսակ քարոզիչներու ալ անհրաժեշտ պէտքն ունի: Քրիստոնէական բեմ մը՝

առանց աւետարանիչի ցնցող ձայնին չատ հեռու է կենդանի ըլլալէ, առանց վարդապետի լուսատու ուսուցումին ենթակայ է տկար և անհաստատ մնալու, առանց մարգարէի նոր շունչին, նոր լոյսին, ան կը դառնայ մեքենական և տառապալտ: Աւետարանիչը արտասուած թոր աչքերով և փոթորկայոյզ սրտով կը մատնանշէ ներկայ ազմայթաթաւ կեանքը և փրկութիւնը, վարդապետը հանդարտ կիցուածքով մը հոգեւոր ժառանգը, անցեալ հոգեւոր փորձառութիւնը կը փոխանցէ ներկային, մարգարէն բարձր սարի վրայէն ակնասեւեռ կը դիտէ հոգեւոր նոր հորիզոններ:

Միւս հոգեւոր գործերը, հովուական և վարչական, յիշուածներէն ոչ նուազ կարեւորութիւն ունին: Հովիւը տեւականօրէն շփման մէջ է ժողովուրդին ամէն խաւերուն հետ, ան կը հասնի յոգնածներուն՝ զանոնք վերցնելու և ի հարկին կրելու, կ'շտապէ նօթի ու ծարաւի հոգիներուն՝ զանոնք կենդանի ջուրին առաջնորդելու, օգնութեան կը հասնի կեանքի բազմակնճիւ հարցերով ալիկոծ միտքերուն՝ զանոնք հանգարտեցնելու, վերջապէս ան ժողովուրդին հետ կ'ապրի, բաժնեկից ըլլալով անոր ուրախութեան և վիշտին բայց միշտ տալով սփոփիչ դարման մը, ներշնչող կորով մը, իր գոյութենէն փրցուած փշուր մը խառնելով անոր կեանքին մէջ:

Վարչագէտ և կազմակերպող գործիչը այն է որ կը ճանչնայ իրերն ու անձերը իրենց իրական արժէքովը, գիտէ անոնց օգտակար ըլլալիք յարմարագոյն դիրքը, պաշտօնը, կրնայ իր պատկառագոյն անձնաւորութեամբը հեղինակութիւնը բարձր պահել, կրնայ իր գնահատող բնաւորութեամբ մարդերու սիրտը իրեն կապել, նուազագոյն շփուժով և դժուարութեամբ կրնայ մարդերը գործօն պահել, կրնայ իր գործերը մեթոտիկ կերպով կազմակերպել:

Ահա այս հինգ տեսակ գործերը պէտք է կատարուին ունէ եկեղեցիի մը դաշտին մէջ: Ամէն մարդ առաւել կամ նուազ չափով այս հինգ տեսակ գործերը կատարելու կարողութեամբ կամ չընորհքով օժտուած է Աստուծոյ կողմանէ, և սակայն ունէ մարդ ասոնցմէ մէկ երկուքին մէջ միայն կրնայ մասնաւոր և ցոլուն հանգամանք մը ունենալ: Ունէ գործիչ մը չի կրնար նոյն չափով թէ՛ մեծ աւետարանիչ մը, թէ՛ ներհուն վարդապետ մը, թէ՛ տեսլապաշտ մարգարէ մը, թէ՛ կարեկից հովիւ մը և կարող վարիչ և կազմակերպիչ մ'ըլլալ: Մասնաւորելով մեր խօսքը աւետարանական գործիչներուն պէտք է ըսել՝ թէ մեր ժողովուրդները միշտ կը փորձուին իրենց հոգեւոր պաշտօնեաներէն ակնկալել աւելի քան: Շատ քիչ է թիւը այն մարդոց որոնք այս բազմակողմանի կարողութիւններով օժտուած են: Անոր լաւագոյն մէկ օրինակն է Պօղոս Առաքեալ որ նոր կտակարանի մէջ միզի կը յայտնուի իբրեւ կապան աւետարանիչ մը, մարգարէաշունչ գործիչ մը, անման կազմակերպիչ և վարիչ մը, և միևնոյն տոնն քրիստոնէութեան առաջնակարգ վարդապետը: Հոս մեր նիւթէն դուրս է պերճախօսութիւնը, որ քարոզութեան զարգն է միասին:

Իրաւունք չունինք ակնկալել մեր քարոզիչներէն եւ երէցներէն այնպիսի բաներ գոր անոնք չունին: Ամէնը աւետարանիչներ են, ամէնը վարդապետներ են, ամէնը մարգարէներ են, ամէնը հովիւներ են, ամէնը վարչագէտներ են: Պէտք է գոհ ըլլանք այն բանով զոր ունին, եւ չքննադատենք իրենց չունեցածին համար:

Եկեղեցի մը իմաստութիւնը պէտք է ունենայ նախ՝ տեսնելու եւ գնահատելու այն կարողութիւնը կամ կարողութիւնները, որ իր հովիւը ունի, փոխանակ զայն գովելով շփացնելու, եւ

ապա պէտք է կարողութիւնը ունենայ զանազան միջոցներով անոր պակասը եւ չունեցածը լրացնելու՝ փոխանակ զայն՝ քանզի քննադատութիւններով վնասեցնելու եւ գործը չէզոքացնելու։

Միւս կողմէն հոգևոր գործիչը պէտք է լմաստութիւնը, առողջ դատում եւ հոտառութիւնը ունենայ իրերն ու արժէքները ճիշդ գնահատելու, իրերու առած ընթացքը ուղիղ որոշելու։ Պէտք է ան ինքզինքը զիտէ ոչ թէ միայն իր ակնոցով եւ իրեն չափուող սովորական դարձած քաղաքավարական եւ երբեմն համակրալիւր արտայայտութիւններու լոյսովը, այլ պէտք է թափանցողութիւ-

նը ունենայ ժպիտներէն անդին հոգինե-
րու մէջ թաքուն զգացումները եւ գնա-
հատումները կարողալու, որպէսզի կա-
րենայ իր արժէքն ու թերութիւնը տես-
նել եւ ջանայ ժողովուրդին մէջ գտնուող
եւ կամ արտաքին ոյժերով իր պակասը
լրացնել։

Ժողովուրդը, սակայն, իրաւունք ու-
նի պահանջելու բան մը, որ անհրաժեշտ
պայման մ'է սեւէ հոգևոր գործիչի մը
համար, Քրիստոսով սրբացած նկարա-
գիր մը, Անոր հետ տեական հաղորդա-
կցութեամբ խորունկցնող հոգևոր փոր-
ձառութիւն մը։ Ահա չափանիշը։

ԴԵՊԻ ՅԱՌԱՂ ԹԷ ԵՏ

«ՄՕՐԸ ՎԵՐԲԸ ԶԷ ՍՊԻԱՅԱԾ»

«(Մայր Եկեղեցին եւ Հայ Բողոքականութիւնը)»

Բ

«ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐ... ԵԿԵՂԵՑԻ ԶՈՒ-
ՆԻՆ», «ԲՈՂՈՔԱԿԱՆԸ ԵԿԵՂԵՑԻ ԶԷ»
յայտարարեց «ՍԻՈՆ» (նոյ. 1930)ի յօդուա-
ծագիրը։ Ահա մտայնութիւն մը Լամբ-
նանայիին հակոտնեայ, ան ալ Լամբրո-
նացիէ 750 տարի վերջը։ Ինչո՞հ, զի
«Բողոքականներ բնաւ ժողով չեն ըն-
դունիր. ամէն մարդ ազատ է իր ուզա-
ծին պէս մեկնելու Սբ. Գիրքը եւ ոչինչ
ունին մեր Հաւատամքին համապա-
տասխանող... աւանդութիւնը կարեւոր
չեն նկատեր»։ Ծիշո՞ք այդ. ճիշդ ա-
տոր համար Բողոքական են. թէ եւ ու-
նին հաւատամք եւ յարգանք հայրա-
պետներուն, սակայն Աւետարանական
են յաւէտ։ ԱԻԱՆԴՈՒԹԻԻՆՆԵՐ ԵՒ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԻՆՈՏՆԵՐ ԱԻԵԼԻ ԵԿԵ-
ՂԵՑԻՆԵՐԸ ԻՐԱՐՄԷ ԲԱԺԱՆՈՂ ՊԱՏԵՐ ԵՆ,
«Ամէն մարդ ազատ է իր ուզածին պէս
մեկնելու... Այո՛։ «Ամէն բան քննեցէք
ու բարին ամուր բռնեցէք» ամէն մար-

դուն կրօնքը՝ իր ծնողի ժառանգածը եւ
հայրապետներէ աւանդուածը չի ալ ի՞ր քըն-
նութեամբ իւրացուցածն է, ի՞ր ստացածն է։

Յիսուս կ'ըսէ. «Ուր երկու կամ երեք
հոգի իմ անունովս հաւաքուին ես անոնց
մէջն եմ...»։ Ահա բողոքականի եկե-
ղեցին։

Յիսուս ըսաւ. «ես որքն եմ եւ զուք
ճիւղերն էք...»։ Սակայն «Սիոնի»
յօդուածագիրը ըսել կ'ուզէ «քանի որ
ոչինչ ունին ՄԵՐ Հաւատամքին նմա-
նող...», քանի որ տարբեր ճիւղի վրայ
տարբեր գոյն ու ձեւ խաղող կուտաք՝
զուք Քրիստոսի վրան ճիւղէր չէք։

«Սիոնի» յօդուածագիրը այսպէս ը-
սելով Աւետարանէն կը հեռանայ ու կա-
րեւորութիւն կուտայ կեղեւին, «դաւա-
նանքին»... «աւանդութիւններուն»,
մարդոց շինածներուն. եւ եկեղեցին ճշմնեղ
կ'ուզէ միայն այդ իր «Մեր հաւատամքին»
մէջ. կ'ուզէ եկեղեցին տեսնել Քրիստոսէ
ետքը 4—500 թուականներու հայրա-

պետներու կազմապարհին մէջ, այդ հիման վրայ կառուցուածը միայն: Սակայն բողոքականը միջոցին կարեւորութիւն կուտայ ու զայն էական կը սեպէ. Հայ-բապեաական ու աւանդապաշտ ըլլալէ աւելի, աւելի հին ու Առաքելական, բուն Աւետարանական է: Առաքելական գաղափարները ՄԱՐԴԱՅԻՆ ձեռքի հանգանակները պոյացած չէին: Բողոքականը՝ այդ նախնականն է—Առաքելական ու աւետարանական հիմ ունի երէկ, այսօր ու յաւիտեան: Բողոքականը կ'ընդունի թէ Սբ. Հոգին այժմու եկեղեցիները, եկեղեցականները և անհատները կ'առաջնորդէ՝ ինչպէս որ առաջնորդեց հին հայրապետները: ՄԱՐԴՈՅ ԵՐԵՄՅԱՆ միշտ թիւրի, ու կատարելագործելի է, սակայն ԱԻՆՏՈՐԱՆԸ անսխալ մեր կրօնի հիմն է ու առաջնորդ՝ կենաց:

Սիրնի յարգելի յօդուածագիրը քանի որ դեռ կը յաւակնի «Բողոքականներ եկեղեցի չունին...» ըսելու՝ մարդոց զիտակով նայելով, քանի որ դեռ «վասն բանից ու բառից վիճարկում» պիտի համարվի մեր անթոյլատու մտայնութիւնը կը շարունակէ, ինչպէս կարելի կ'ըլլայ վերջին սպիացումը: Իմն վերջը անթոյլատու ոչ աւետարանականողին է, որ նաև ներսէս Լամբրոնացիին լայնախոսութեան կը հակասէ: Այսպիսիններուն համար Լամբրոնացիին խրատն է, «երկիւղ խառնեք ու մեղք...»

Դ

«Ի՞նչ է ՃԵՄԱՐԻՏ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈՂԻԿԵՈՒԹԵԱՆ», կամ ռոն Է Ընդհանրական Եկեղեցին:

Ի՞ր պատգամ-կամ դեղագիր—հոս կրկին դառնանք 280 տարի առաջ ապրող Մայր Եկեղեցիի ուրիշ մէկ սբ. Հայրապետին:

(Տպուած գիրք մը ունիմ, առաջին էջերը կորսուած ըլլալուն հեղինակին անունը չեմ կրնար տալ, սակայն տըպագրողներ յիշուած են ետեւը. սա վեր-

նագիրս անոր առաջին գլուխն է):

...«Նախ եւ առաջ կարողիկեութիւն Հոռոմոց բարբառ, ստուգաբանի բողոքական կամ բողոքական, եւ կը նշանակէ ժողովուրդն ամենայն ազգաց Բրիտանիայի միասին: Եւ ընդ այս նշանակութեան ոչ Բրիտանիայ ազգ առանձնակի կաթողիկէ է. և ոչ քանի մը ազգ ի միասին կարող են կաթողիկէ եկեղեցի առնուլ: Քանզի կարողիկէ կ'առաջադրեն բողոք և կը թարգմանի ընդհանրական, և ոչ թէ զմի ազգ, և ոչ թէ զմի քանի ազգ, այլ զամենայն ազգս Բրիտանիայի միասին բողոքապետ եւ բողոքական կը նշանակէ: Քանզի ահա և կաթոնաց Եկեղեցին (Լուտերական = Բողոքական ըսել կ'ուզէ)... ի մէջ ամենայն ազգաց ունի զգաւանակիցս իւր: Սոյնպէս և եկեղեցին Հոռոմոց (յայնք).... Նոյնպէս միաբնակաց եկեղեցին բազկացեալ է ի Հայոց, Յասորոց, ի Խպտոց, և ի Հապէշից.... Նոյնպէս և Հոռոմոցացաց.... Սակայն ոչ ոք եկեղեցի ի սոցանէ ընդ ինքեան կաթողիկէ է: Այլ առնուլ ազգս եւ առնուլ իրիւսունայս ի միասին մի միայն կարողիկէ առնեն:

«Եւ այս միաբնակաց կարողիկէ եկեղեցուն, ըստ Քրիստոսի, ի միութեան մի միայն հովիւն կայանայ: Որ ամէնքն զմի միայն հովիւ ունիցին զԲրիտանոս: Եւ այսպէս զմի միայն հովիւ ունենալով զԲրիտանոս ամէնքն մի միայն հոս են Քրիստոսի:

«Իսկ Պօղոս առաքեալն զայս՝ միութեան հօտին և հովուին առաւել յայտնապէս պարզաբանէ: Մի մարմին, մի հոգի, մի յայտ, և մի տէր, մի հաւատ, մի մկրտութիւն և մի Աստուած և Հայր ամենեցեանցն. Եփս. 4.4: Եւ իրաւի ճշմարտապէս այս մեծ սքանչելիք է թէ զԲարդ յիտ Քաղկեդոնի ժողովոյն թէ պէտ այս կաթողիկէ եկեղեցին իբրոս բաժանեցաւ (ինչպէս վերը յիշեց) դաւանութեանք եւ վարդապետական հաւատով... սակայն մինչեւ ցայսօր առնեն մի հոս եւ մի

հովիւ եւ ըստ Եփս. 4. 4 (սատրագծումները մերն են)։ Պօղոս առաքեալ պարզաբանելով՝ ոչ ասաց մի դաւանութիւն եւ մի վարդապետական հաւատ, այլ ասաց՝ մի յոյս, մի տէր... են։ Այսինքն ամէնն ալ ներկիոյ հանգանակը ընդունած կըլլան, որուն մէջն են Պօղոս առաքեալի յիշած Եփս. 4-5ի կէտերը։»

280 տարիի չափ առաջ, 654ին ապրող Մայր Եկեղեցիին մէկ եկեղեցականը վերոյիշեալ չորս բաժանեալներն ալ եկեղեցի և «մինչեւ ցայսօր ամէնքն ալ մի հօտ և մի հովիւ են ըստ Եփս. 4.4» կ'ըսէ, սակայն Ի. դարու մէջ ապրող նոյն եկեղեցիին ուրիշ մէկ եկեղեցականը՝ հակառակ այդ Սբ. Հայրապետին «մի հօտ և մի հովիւ» գաղափարին՝ կը յան-

դգնի ըսելու «բողոքականներ եկեղեցի չունին... չեն»։

Ահա՛ «Սրտնի» յարգելի յօդուածագրին մտայնութիւնը՝ փոխանակ «վերջը սպիայնելու» աւելի խորունկ վերջի պատճառ է, եկեղեցիները իրարմէ աւելի հեռացնելու կը նպաստէ... վերաւորող ինքն է։

Անգամ մը ալ շեշտեմ ներսէս Լամբրոնացիի Քրիստոսանման հոգեշունչ խրատականը — «կշտնքանօք մեկը ի սեռ կը հրախրես... ՀԱՍԱԻ ԺԱՄԱՆԱԿԸ Ի ՄԱՍՏՈՒՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐՈՒԴ ՍՅԳԻՆ ՅՕՏԵԼՈՒ ԵՒ ԶԱՅՆ ՍՐԲԵԼՈՒ Ի ՍԱՀԱՐԹԻՑՍ ԱԻՆԼՈՐԴԱՑ»։

Եանգրոս Նիւ-եոֆ Կ. Պ. ԱՏԱՆՍԼԵԱՆ
Մարտ 25, 1931

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅ ԿԻՆԵՐ*

ՀԱՒԱՏՔԻ ՏԷՐ ՄԱՅՐ ԽԸ

Այրարատեան նահանգի նիգ դաւառի Եղիպատրուշ գիւղէն ազգատիկ ու մանկամարդ կին մը այրի մնացած էր միամօր կաթնկեր մանչ գաւաղով մը։ Բարեպաշտ որբեւարին անոք ու՛ անօգնական էր և անկարող իր բնիկ գիւղին մէջ ապրուստը ձարելու։ Որով ստիպուեցաւ մուրացիկ շրջելու։ Այսպէս գիւղէ գիւղ և տեղէ տեղ թափառելով և միշտ լաւագոյն տեղ մը գտնելու փափաքով, վերջապէս կռագայ կը հասնի Դուին որ այն ատեն Հայաստանի մայրաքաղաքն էր, ուր կը նստէին Հայոց կաթողիկոսը և Պարսից մարզպանը։

Մեծ եկեղեցիներու գուռները ամէն ժամանակ մուրացիկներու ընտրելագոյն տեղերն են։ մեր յիշած մանկամարդ որ-

բեւարին ալ, որուն անունը ղժրախտաբար մեզի հասցուցած չէ պատմութիւնը, եկաւ հաստատուեցաւ մուրացիանութեան սովորական տեղը, հայրապետական կաթողիկէին դրան առջևը։ Այս եղած է հաւանօրէն Եղիա կաթողիկոսին օրով (Յ. Տ. 703—714)։ Խեղճ կինը իր և մանկիկին օրապահիկը ձարելու համար, չէր մեկնէր եկեղեցիին գուռէն, թէպէտեւ ձմեռ ատեն ցրտահար գրեթէ կը սառէր, իսկ ամառը արեւակէզ տապախարշ կը չարչարուէր։

Մայր եկեղեցւոյն քահանաներն ալ մանկամարդ մուրացիկին թշուառ վիճակը գիտելով, քանիցս իրեն կ'ազգարարեն որ ձգէ կաթողիկոսարանին գուռը, և երթայ ուրիշ տեղ իրեն պատըսպարան և ապրուստ փնտռէ։ Կինը սակայն յամառելով կը մնար իր եղած տեղը, չէր ուզեր կաթողիկոսարանին գուռէն հեռանալ, և երբ աւելի պնդեցին, սա պատասխանը տուաւ. «Ձէ՛ք

(*) Սոյն վերնագրով ութը կարճ կինսագրութիւններէ բաղկացեալ ուսումնասիրութիւն մը հրատարակած եմ 1912 տարւոյ Հայերէն Աւետարներին մէջ։ Ներկայս երկրորդ շարքի մը սկզբնաւորութիւնն է։

գիտեր որ իմ որդեակս կաթողիկոս ըլլալու համար կը սնուցանեմ»։ Ձարմանալի յայտարարութիւն մը, որ անշուշտ լսողներուն ծաղրը շարժեցէն զատրանի մը չծառայեց։

Բայց որդեակէր մայրը խորունկ հաւատքի տէր կին մըն էր, և Աւետարաններուն մէջ յիշուած այդ Քանանացի կնկան հաստատամտութիւնն ալ ունէր։ Հաւատքով ու համբերութեամբ սոսկաց կեանքի տառապանքներուն և յուսով ու սիրով խնամեց ու մեծցուց իր զաւակը։ Տարիներ կ'անցնէին և մուրացիկին տղան վերջապէս աշակերտ կ'ընդունի կաթողիկոսարանի ժառանգաւորացը, և հոն հայրապետանոցի մէջ սնեալ և ուսեալ, արագօրէն կը զարգանայ ու կը յառաջգրիմէ։ Յիսուս Փրկիչ ինչպէս երբեմն Քանանացի մօր, նոյնպէս այս Եղիպատրուշեցի որբեւորին ըսած էր. «Ով կին, մեծ է քու հաւատքըդ, քու ուզածիդ պէս ըլլայ քեզի»։

Օրմանեանի կարծիքով Յովնան Օձնեծիին օրերուն կ'ընայ որբ տղուն յաջողիլը կաթողիկոսարանի մէջ աշակերտութեան ընդունուելու։ Կ'երեւի թէ կնոջ հաստատամտութեան հետ տղուն ուշիմութիւնն ալ իմաստասէր կաթողիկոսին ուշադրութիւնը գրաւած էր։ Հարկաւ տղուն հետ մօրը համար ալ նպաստաւոր ու յարմար կարգադրութիւն մը եղած պիտի ըլլայ, բայց մայրը այլևս չի յիշուիր։

Երբ տղան լաւ յառաջգրիմութիւն կը յայտնէ իր ուսմանց մէջ, և հայրապետանոցի պաշտօններուն մէջ ալ արդիւնք և արժանիք երեւան բերելով, աստիճանէ աստիճան կը բարձրանայ, մինչեւ օր մըն ալ եպիսկոպոսութեան կը հասնի Գողթնեաց վիճակին վրայ։ Սիսն Բասոնեցի կաթողիկոսին օրով, 768ին, Պարտու գումարուած եկեղեցական ժողովին մէջ Մարգարտական և Սիւնեաց մեղրապօլիտներէն

ետքը յիշուած Գողթնեաց Եպիսկոպոսն է Եղիպատրուշեցի մուրացիկ որբեւորին որդին։ Խեղճ որբուկը Հայաստանի ամէնէն նշանաւոր եպիսկոպոսներէն մէկն էր եղած, և այսպէս իր մօրը հաւատքը վարձատրուած։

Այլ վերջապէս պիտի գար նաեւ հաւատքով լի մայրիկին մարգարէութեան կատարումն ալ։ Արեւելի ու Բագրեւանդի պատերազմներուն աղէտալի օրերէն ետքը, երբ յանկարծ հայրապետական աթոռն ալ դատարկ կը մնար (775ին) ամէնուն աչքերը դարձան այժմ գրեթէ վտնագնդաւոր Եսայի եպիսկոպոսին, որուն արժանեաց հռչակը տարածուած էր ամէն կողմ, և ընդհանուր հաւանութեամբ զինք ընտրեցին ու հրաւիրեցին այդ ամենազօտաւորին ժամանակին մէջ վարչութեան ղեկը ձեռք առնելու։ Այսպէս, կաթողիկոսարանի դրան առջեւ մուրացող խեղճ կնկան որբուկը ահա կաթողիկոսական աթոռին վրայ բարձրացաւ և 13 տարի ամենայն յաջողութեամբ վարեց ազգին ու եկեղեցւոյն գործերը, շահելով մինչեւ իսկ Հորուն էր Ռաշիտ ամիրապետին համարումը և կարեւոր այցելութիւն մը տալով անոր Ուպէտ Ուլլահ եղբորը, որուն յանձնուած էր Ատրպատականի, Հայաստանի, Վրաստանի և Աղուանից երկրին ընդհանուր իշխանապետութիւնը։ Ինչպէս Յովհաննէս Պատմաբան կաթողիկոսը կը գիտէ, այս կերպով «այդ կինը իր մանկան համար գրեթէ մարգարէութեան մը եղած զանուեսցաւ»։

Մեր ժամանակի այնչափ բազմաթիւ որբեւորի Հայ մայրերուն կարծեմ թէ լաւ օրինակ մը և քաջալիք կրնայ հանդիսանալ Եսայի Եղիպատրուշեցի կաթողիկոսին մայրը, որուն պարագաներն ալ այնչափ յարեւմտեան են մեր հերկայ պարագաներուն։

ԵԶԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

10. ՈՒՍՏԻ ԱՄԷՆ ՎԱՅՐԿԵԱՆ ԱՌԱՆՅ ՄԵՂԱՆՁՈՒՄԻ

ՊԷՏՔ Է ՀՕՐԸ ՀԵՏ ՄԷԿ ԸԼԼԱՆՔ

Գրեց՝ ՉԵՐԹՔՐՈՎ

Թարգմ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Հրեաները տեսնելով որ Քրիստոսի վարդապետութիւնը պիտի քանդէ իրենց պետութիւնը, կրօնը և ազգութիւնը, ու տեսնելով որ չպիտի կրնան անոր հակառակիլ, որոշեցին սպաննել Չայն: Անոր անմեղութեան և արգար ըլլալուն ծանօթ էին, բայց քահանայապետը՝ Կայրափա՝ պատճառանք մը կը փնտռէր Յիսուսը սպաննել տալու, թէ և ինք ալ վստահ էր Անոր անմեղութեան: Կայրափա ըսաւ. «Պէտք չունինք քննելու թէ արգար է կամ ոչ: Կա՛մ պէտք է հրէութիւնը մնայ՝ իբր առանձինն ազգ՝ և այս մարդը սպաննենք, կա՛մ Չայն ազատ թողունք ու մենք կոտորուինք, ցրուինք, ազգը կործանի և Ժողովուրդը ցանուցիր ըլլայ:»

Ուղղափառ Փարիսեցիները որոշեցին Յիսուսը մահուան մատնել: Անոնք դըր գեցին Ժողովուրդը, որ Քրիստոսը բռնեն երբ Երուսաղէմ երևի: Աշակերտները ազաչեցին, որ ետ կենայ, բայց Յիսուս ըսաւ. «Թէ՛ Փարիսեցիները և թէ՛ Ժողովուրդը ոչինչ կրնան ընել ինձ և չեն կրնար ճշմարտութիւնը փոխել ինձ համար: Ես լոյսը հետս ունիմ և գիտեմ թէ ո՛ւր եմ և ո՛ր ճամբէն կ'երթամ: Ով որ ճշմարտութիւնը չի գիտեր, միայն ան կրնայ ունէ բանէ վախնալ, կամ տարակուսիլ:» Ով որ չի տեսներ կը սայթաջի: Ու զնաց Երուսաղէմ. Բեթանիոյ ճամբան սպասեց:

Երբ Բեթանիան թողուց ու Երուսաղէմ ուղղուեցաւ՝ մեծ բազմութիւն մը զիմաւորեց զինք և հետեւեցաւ իրեն: Փարիսեցիներ այս տեսնելով ա-

ւելի համոզուեցան թէ պէտք է սպաննել Չայն:

Յիսուս գիտէր թէ օրէնքի հակառակ ունէ անզգոյշ, նոյնիսկ ամենաթեթեւ բառ կամ ակնարկութիւն առիթ պիտի նկատուի իր սպաննուելուն: Ժիշդ ասոր համար մտաւ տաճար. պարգեց թէ Հրեաներուն պաշտամունքը, իր սրբութիւններով ու զոհերով սխալ է եւ սկսաւ իր վարդապետութիւնը ուսուցանել: Յուցուց թէ իր վարդապետութիւնը հաստատուած է մարգարէութիւններու վրայ, սակայն Փարիսեցիները տակաւին օրէնքի հակառակ շօշափելի փաստ մը չգտան, որով կարենային Չայն մահուան մատնել: Ասկէ զատ խոնարհազոյն դասին բացարձակ մեծամասնութիւնը տակաւին Քրիստոսի հետ էր:

Տօնին ներկայ էին քանի մը հեթանոսներ ալ, որոնք ուզեցին Յիսուսի հետ խօսիլ իր վարդապետութիւններուն մասին: Իր աշակերտները վախցան թէ՛ կրնայ ըլլալ որ Յիսուս անոնց հետ խօսելով Ժողովուրդը գրգռէ: Նախ՝ չուզեցին հեթանոսները Յիսուսի ներկայացնել, բայց յետոյ յայտնեցին Յիսուսի հեթանոսներուն փափաքը: Յիսուս այս լսելով խռովեցաւ: Ան գիտէր թէ՛ հեթանոսներուն հետ ունենալիք իր խօսակցութիւնը յստակօրէն պիտի յայտնէր հրէական օրէնքին դէմ իր ունեցած հակառակութիւնը, որուն վրայ Ժողովուրդը պիտի հեռանար իրմէ և Փարիսեցիներուն պատճառ մը պիտի տրուէր, որ զինք զգուելի հեթանոսներուն հետ միաբան նկատէին: Յիսուս

գիտէր նաեւ թէ՛ իր առաքելութիւնն էր մէկ հօր՝ Աստուծոյ՝ որդիներուն, մարդոց, յայտնել ճշմարիտ միութիւնը և կրօնական տարբերութիւններուն սրահամարհելի ըլլալը:

Ան գիտէր թէ՛ ճիշդ այդ վայրկեանին առնելիք քայլը՝ իր ֆիզիքական կեանքին վախճանն էր. հոգեկան արդիւնքներու ծնունդ տալու համար, ուստի, ըսաւ. «Ան որ ֆիզիքական կեանքին կը կառչի կը կորսնցնէ ճշմարիտը: Ով որ հոգ չ'ընէր ֆիզիքական կեանքին համար, կը շահի ճշմարիտը: Այս գէպքէն խոտոված եմ, բայց ես ապրեցայ, որ կարենամ այս ժամուն հասնիլ, ուրիմն ինչպէս կրնամ զգեցնուիլ ընկու աշն, որը պարտիմ ընել: Հիմա Հօրը կամքը պէտք է իմ միջոցաւ ցուցուի» Դառնալով հեթանոսներուն՝ ժողովուրդին յայտնապէս պարզեց ինչ որ առանձնօրէն խօսած էր Նիկոգեմոսի. «Մարդոց կեանքը, իր այլապէս կրօններով և կազմակերպեալ ուժերով, պէտք է փոխուի: Բոլոր ուժն ու հեղինակութիւնը պէտք է ջնջուի: Անհրաժեշտ է ճանչնալ մարդուն բնութիւնը, իրր կեանք—Հօրը որդին: Այս ճանաչումը պիտի ջնջէ մարդոց մէջ գտնուած ամէն բաժանում և բոլոր իշխող ուժերը և մարդիկ իրարու պիտի միացնէ:»

Հրեաները ըսին. «Դուն մեր կրօնը բոլորովին կը կործանես: Մեր օրէնքը Քրիստոսի կ'սպասէ. իսկ դուն մի միայն «Որդի Մարդոյ»էն կը խօսիս եւ կ'ըսես ան պէտք է բարձրանայ: Ինչ կը նշանակէ այս:» Յիսուս պատասխանեց. «Որդին Մարդոյ բարձրացնել կը նշանակէ մարդոց մէջ գտնուած Հոյսին ճանաչումովը ապրիլ և Հոյսին հետեւիլ: Ես նոր հաւատք չեմ ուսուցացաներ, այլ որ ամէն ոք պէտք է ինքն իր մէջ ճանչնայ: Ամէն ոք պիտի թէ կեանք ունի և թէ այդ կեանքը

տրուած է կեանքի Հօրը կողմէն: Իմ վարդապետութիւնս է, թէ մարդ պէտք է ապրի բոլորին Հօրը շնորհած կեանքը:»

Ռամիկ դասէն շատեր հաւատացին Յիսուսի, բայց ազնուական և պաշտօնական դասերը չհաւատացին, քանզի անոնք չուզեցին գնահատել տիեզերական սիրոյ հիմը, որուն համար Յիսուս կ'ըսէր, հապա վայրկեանական ու անցաւոր դիրքը նախընտրեցին: Անոնք, տեսնելով որ Յիսուս ժողովուրդը իրենցմէ կը դարձնէ, աւելի հաստատ ուրջեցին զայն սպաննելու: Սակայն հրապարակաւ բռնելէ վախնալով, չհամարձակեցան Երուսաղէմի մէջ, օր ցորեկով ձերբակալել, որոշեցին զապտի տեղ մը կատարել մտադրութիւնն: Յուդա Իսկարէթովացին՝ տասներկու աշակերտներէն մին՝ մօտեցաւ իշխանաւորներու, որոնք կաշառեցին զինք, որպէսզի, երբ Յիսուս ժողովուրդէն հեռու գտնուի, իրենց լրտեսները Անոր քով առաջնորդէ: Յուդա խոտացաւ և գնաց Յիսուսի քով, սպասելով յարմարագոյն պատահութեան, որ զայն մատնէ:

Յիսուս և իր աշակերտները տօնի առաջին օրը պահեցին Պասքքը: Յուդա՝ կարծելով թէ Յիսուս անտեղեակ էր իր մատնութենէն՝ անոնց մօտ գնաց: Բայց Յիսուս գիտէր թէ Յուդա զինքը ծախած է, երբ ճաշի նստած Յիսուս հացը առնելով մասերու բաժնեց և ամէն մէկ աշակերտի՝ Յուդան ալ մէջը ըլլալով՝ մէկ մէկ կտոր տուաւ. «Առէք ու կերէք, այս է իմ մարմինս:»

Յետոյ բաժակը առնելով տուաւ բոլորին ալ, Յուդային ալ, որպէսզի խմէ և առանց ունէ անուն աւալու տուաւ. «Ձեզմէ մէկը իմ արիւնս պիտի թափէ: Խմեցէք, այս է իմ արիւնս:»

Անկէ ետք Յիսուս ելաւ ու սկսաւ աշակերտներուն՝ Յուդայինն ալ՝ ոտքերը

լուաց: Երբ լմնցուց ըսաւ. «Ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ, որպէսզի սպաննեն և արիւնս թափեն, բայց ես զինք կերակրեցի, խմցուցի և իր ոտքերը լուացի: Ասիկա ըրի ցուցնելու, թէ ի՞նչպէս պէտք է վարուիլ անոնց հետ, որ ձեզի կը վնասեն: Եթէ այս կերպ գործէք պիտի օրհնուիք:» Թէև Աշակերտները մատնիչին անունը հարցուցին, բայց Յիսուս չըսաւ, որպէսզի անոր չվնասեն:

Մթննալուռն Յիսուս յայտնեց, թէ Յուդան էր մատնիչը և թելադրեց հեռանալ: Յուդա ելաւ ու գնաց: Ոչ ոք արգիլեց:

Յիսուս ըսաւ. «Որդին Մարդոյ բարձրացնելուն նշանակութիւնը Հօրը նման բարի ըլլալն է և ոչ միայն մեզ սիրողներուն հանդէպ բարի ըլլալ, այլ նոյն իսկ մեզի վնասողներուն հանդէպ: Ուստի իմ վարդապետութեանս վրայ մի՛ վիճիք, զայն մասերու մի՛ բաժնէք, ինչպէս Փարիսեցիները ըրին: Հապա ինձ պէս ըրէք: Միայն մէկ պատուէր կուտամ. Սիրեցե՛ք զՆիսիման: Իմ բոլոր վարդապետութիւնս է սիրել ամէն մարդ, մինչև գերեզման:»

Ասկէ ետք վախ մը եկաւ Յիսուսի վրայ, ուստի աշակերտներուն հետ գընաց պարտէզ մը, ճամբէ դուրս ըլլալուն համար: Մինչ կը պտըտէր ըսաւ. «Բոլորդ ալ երկմիտ և երկչոտ էք, եթէ անոնք գան զիս բռնելու բոլորդ ալ կը փախչիք:» Պետրոս պատասխանեց. «Երբեք քեզ պիտի չթողում, այլ պիտի պաշտպանեմ մինչև մահ:» Բոլոր աշակերտներն ալ նոյնը կրկնեցին: Յիսուս աւելցուց. «Եթէ այդպէս է պաշար առէք, քանզի պիտի պահուըտինք. զէնք առէք մեր անձին համար կռուելու:» Աշակերտները յայտնեցին, թէ երկու սուր ունին: Յիսուս երկու սուրերուն մասին լսելով անձկութիւն մ'ունեցաւ: Ամայի տեղ մը երթալով սկը-

սաւ աղօթել և թելադրեց որ աշակերտները նոյնը ընեն: Սակայն աշակերտները բան մը չհասկցան: «Ո՛վ Հայր, փորձութեան հետ մղած պատերազմս վերջացուր: Դու կամքիդ կատարումով զօրացուր զիս: Իմ անձնական ձեռն չեմ ուզեր, չեմ փափաքիր մարմինս պահել, այլ կ'ղծամ կամքդ կատարել, առանց չարին հակառակելու:»

Աշակերտները դեռ բան մը չէին հասկցած. ուստի ըսաւ. «Մի՛ հաշուէք մարմնական վիշտերը, այլ ջանացէք հոգիին մէջ մնալ: Զօրութիւնը հոգիին մէջ է, բայց մարմինը անուժ է:»

Երկրորդ անգամ առանձնացաւ. «Հայր իմ, եթէ չարչարանքը անհրաժեշտ է, թող գայ: Սակայն չարչարանքին մէջ անգամ միայն մէկ բան կ'ուզեմ՝ Դու կամքիդ թող ըլլայ, ոչ թէ իմըս:» Աշակերտները նորէն բան չը հասկցան:

Նորէն սկսաւ փորձութեան հետ կըռուել: Վերջապէս յաղթեց: Դառնալով աշակերտներուն ըսաւ. «Ամէն բան կատարեալ է. կրնաք հանգստանալ: Պիտի չկռուիմ, այլ պիտի յանձնուիմ այս աշխարհի մարդոց ձեռքը:»

ՄԵՐ ՄԻԱԿ ՔԱՐՈՋԻՉԸ

Օրթոտոքս Հելլէններու մէջ հոգեւոր շարժում մը սկսած է, որուն կարեւոր մէկ առաջնորդն է Տիար Զաքարիա: Տիար Սթիլ Այան Օզլու, գահիրէէն, անոր կենսագրութեան և ներկայ գործին մասին մեզի զրկած է երկայն յօդուած մը, զոր ուրախութեամբ կ'սկսինք հրատարակել:

Մ. ՈՄԲ.

Ան ծնած է Յունաստանի Վոլոս աւանը այնպիսի ընտանիքի մը մէջ որ չի կրնար բարձր կրթութիւն մը տալ իր

դաւաճեցան: Ան իր մանկութենէն ըսկսեալ մասնաւոր սէր և կարողութիւն ցոյց կուտայ, որով ան եկեղեցիին մէջ կ'ստանայ ձայնաւորներու ղեկավարութիւնը: Այս պատճառաւ ան քահանաներու հետ միասին կ'ապրի, անոնց շահակից կ'ըլլայ, անոնց ամէն գործին և պաշտօնիքին տեղեակ կ'ըլլայ: Ատեն մը այսպէս շարունակելէ վերջ իր խելքը գլուխը կը բերէ և աւելի շահաւոր և լուրջ սակարկութեան մէջ կը մտնէ և Գաղղինոյի մը մէջ սպասարկունեբու պետի պաշտօնը կ'ստանձնէ: Հոս թէ իր ամսավճարը կ'առնէ և թէ 100 տոլարի չափ գումար մը իր տիրոջմէն կը շորթէ, որպէսզի անով կարենայ Ամերիկա ուղեւորիլ և հոն ճոխ կեանք մը ապրիլ: Քիչ ետքը իր եղբայրը հետը առած կը յաջողի Ամերիկա մտնել:

Տեսնելով որ իր տեսակէն մարդիկ մեքենագէտներու մէջ կը գտնուէին, թէ՛ զանոնք վայելելու և թէ՛ նոր արհեստ մը սորվելու համար ֆորտի գործարանը մտաւ: Հոս ատեն մը աշխատելէ ետքը իր ճարպիկութեան շնորհիւ մեծ թիւով բռնւորներու վրայ վերականգու կարգուեցաւ՝ օրական 10 տոլար վճարուեով: Իր ստացած այս առատ դրամը իր տպագային համար վերանգ մը եղաւ, և պատճառ եղաւ որ ամերիկեան կեանքի ստորին շրջանակներուն մէջ մեղքի ամէն տեսակները ճաշակէ, այնպէս որ երիտասարդական թարմութիւնը թառամելու, երգի կրակը մարելու և քայլ առ քայլ դէպի գերեզման, դէպի դժոխք երթալու սկսաւ: Մինչ այսպէս մեղսաթաթաւ և անբարոյականութեան գերի կեանք մը կ'ապրէր, և իր ուր յանգիլը չէր գիտեր, որ մը սափրիչի մը խանութը կը մտնէ անծիլուելու համար: Սափրիչը այս երիտասարդին կը հարցնէ թէ ինք Աւետարան մը ունի: «Ես մեր եկեղեցիին մէջ գպիր մըն եմ, բոլոր Աւետարանը գոց

գիտեմ, և թէ ես Բողոքական մը չեմ» կը պատասխանէ ան: «Վնաս չունի, եթէ կ'ուզես ընդունիլ ես կ'ուզեմ քեզի փոքր Աւետարան մը նուիրել» ըսաւ սափրիչը և գիրքը անոր տուաւ: Սափրիչին քաղցրաբարոյութիւնը, անոր թանկագին նուէրը, ներշնչող կերպարանքը, բոլոր շարժուածքները երիտասարդին հոգին գերեցին, և երկնային օրհնութիւն մը եղան իրեն համար: Սափրիչի խանութը ալ իրեն համար եկեղեցիէն աւելի սուրբ վայր մը, և սափրիչն ալ իրեն ծանօթ բոլոր քահանաներէն աւելի սուրբ մէկն էր:

Երիտասարդը սկսաւ բնական մղումով և սիրով այս խանութը յաճախել, սափրիչին հետ խօսակցիլ: Օր մը սափրիչը իրեն ըսաւ. «Ինծի ըսիր թէ եկեղեցիի մէջ դպիր ես և թէ երգեցողութեան սիրահարն ես: այսօր կ'ուզեմ քեզ տեղ մը տանիլ ուր քաղցր երգեր պիտի լսես, կ'ուզե՞ք հոն երթալ» Ասոր վրայ Զաւանիս, այսպէս կը կոչուէր երիտասարդը, թէ՛ երգ լսելու և թէ՛ զրօնելու համար իր բարեկամ սափրիչին հետ տանեալ մը մարդերու հաւաքուած սենեակ մը գնաց: Հոն լսեց այնպիսի երգեր որոնց եղանակները բոլորովին իրեն նոր էին, բայց որոնց բառերը մինչև իր սիրած թափանցեցին, և իր հոգին մարեցաւ: Երգեցողութենէն ետքը ներկաներէն մէկը խօսեցաւ ծանրանալով՝ «Հապա ի՞նչ ընեմ Յիսուսը որ Քրիստոս կ'ըսուի» համարին վրայ: Եւ իր խօսքերը երիտասարդին ուղղելով ըսաւ. «Եւ դուն երիտասարդ, չես կրնար չէզոք մնալ կամ Հրեաներուն պէս խաչը հանէ ասիկա պիտի ըսես և կամ զԱյն իբր քու անձնական Փրկիչդ պիտի ընդունիս: Ուրեմն ի՞նչ պիտի ընես, ինչ որ ոչ ոք մտած տուն պիտի երթաս» Երիտասարդը ընկճեցաւ և սկսաւ արտօսալիւր աղաչել: Ան տեսաւ թէ եկեղեցիի մէկ պաշտօնեան, ձայնաւոր մը

չէ այլ զժողովրդի արժանի ձայնաւոր մըն է: Եղբայրներու ջերմ աղաչանքը, Աւետարանի քարոզութիւնը, երգեցողութիւնները պատճառ եղան որ այս ինկած հոգին Փրկչին ոտքերը իյնալու յօժարի: Զազանիս ասոր արգիւնքը ըլլալով ապաշխարեցաւ և փրկուեցաւ անբացատրելի ուրախութեամբ լեցուելով:

Այս վերստին ծնունդի միջոցաւ Աստուծոյ շնորհքը այս երիտասարդը այնպէս մաքրեց, փրկեց և ցնծութեամբ լեցուց, որ ան սկսաւ ամէն սահմանը անցնիլ, ստացած երկնային ուրախութիւնը փառաբանել, և իր վկայութեամբը ուրիշներու ալ փոխանցել: Իր կեանքին մէջ յայտնուած սրբութիւնը, իր բնածին սրտաբացութիւնը, իր խօսքերուն վճռականութիւնն ու յստակութիւնը գինքը, այս նորածին աստուածային նկարագիրը, բոլորին հիացումին առարկայ ըրին: Անոնք որ իր փրկութեան պատճառը եղած էին, նոյնիսկ սափրիչը, թելադրուեցան գինքը իբր իրենց ճշմարիտ մէկ առաջնորդը ճանչնալ, և անոր նկարագրին և ջերմեռանդութեան քով իրենց կեանքերուն համար ամէնալ:

Այս միջոցին իր մեղքերուն սե ցանկը, մանաւանդ Յունաստանի մէջ կատարած 100 տղարի գողութիւնը աչ-

քին առջեւ եկաւ: Խնդիրը եղբայրներուն յայտնեց, անոր լուծում մը տալու համար անոնց փորձառութենէն օգտուիլ ուզեց: Եւ բոլորը միաձայնութեամբ յարմար տեսան որ Զազանիս 100 տղարնոց փոխդիր մը զբէ իր նախկին տիրոջ, նամակով մը յայտնելով իր ապաշխարութիւնը, Փրկչին յանձնուելով մեղքերուն անյայտացումը, այս գողութեան եւ ուրիշ մեղքերուն իրեն շատ սուղ արժելը, այս դրամը վճարելու համար ուէ զժողարութիւն մը չկրելը, ասկէ ետքը իր կեանքը անցեալը քաւելու համար նուիրելը. և այսպէս ալ ըրաւ:

Մեղքի ընկերները եւ 10 տղար օրավարձով գործը ձգեց. եւ տեսնելով որ պէտք է ոչ ուրիշ բան այլ միայն Տէրոջ մէկ գործիչը ըլլալ՝ վճռական որոշումով Աստուածաբանական գպրոց մտաւ: Իր եղբայրներն ու քոյրերը ուզեցին որ այն իր այս ընթացքը թողու: «Դուն Բողոքական եղեր ես, Յոյն Օրթոտոքս եկեղեցիի նման եկեղեցին ուրացեր ես, դուն խենդացեր ես» ըսելով աշխատեցան անոր խանդը մարել: Եթէ կարելի ըլլար պիտի բզքտէին: Իսկ ան ամէն բան լքեց, եւ ընդունեց զպրոցական կեանքը, եւ Փրկիչը, զոր իր յաւիտենական բաժինը նկատեց: Շար.

ՈՒՐԱՐ ՏԱՅԻՔ

Մեր նախահայրերու, Արիական հայոց, Արարատի լեռնադաշտերը գաղթելով հոն հաստատուելէն բազում դարեր առաջ (ն. ք. 2500—3000) Արիական ցեղին օտար ժողովուրդներ այն լեռնադաշտները եկած և տեղաւորուած են, փայլուն քաղաքակրթութիւն մը և հըսկու պիտութիւն մը կերտած են: Անոնք այն ժամանակուան իրեն դրացի հզօր տերութիւններու հետ չափուելէն վերջը

պատմութեան թատերաբեմէն վար իջած և անհետ եղած են: Այս արարատեան հին պետութիւնը կ'անուանուի Ուրարտու:

Ուսկից՝ եկեր են այս ժողովուրդները այս Արարատեան երկիրները: Այս մասին երեք աւանդութիւններ կան: Կարգ մը պատմութիւններ կը պնդեն թէ Թուրքիստանի Սամարգանդ նահանգին մէջ ապրող ժողովուրդներէն հաստուած

մը, Պարսկաստանէն անցնելով ուղղակի եկած և Արարատի բարձր գաշտերը բնակութիւն հաստատած է։ Ոմանք կը կարծեն թէ ասոնք այն Թուրանեան ցեղերու մէկ մասն են որոնք կեդրոնական Ասիայէն շատ հին դարեր առաջ Պաղտատի և Պասրայի կողմերը գալով՝ «Աքքատ» անունով քաղաքակրթութիւն մը հիմնարկեցին։ Ահա այս Աքքատեաններէն մէկ մասը դէպի հիւսիս ուղեւորելով հոն Ուրարտական տէրութիւնը կերտեցին։ Ուրիշներ ալ կը հաւատան թէ Ռուսաստանի կեդրոնական գաղտագետիններու մէջ ապրող Թաթար կամ Մոնղոլ ժողովուրդներէն մաս մը գալով Արարատեան երկիրը շէնցուցին։ Այս հին Արարատեան ժողովուրդը ուսկից և ինչ ճամբով ալ եկած ըլլայ, իրենց մարմնական կազմուածքը եւ լեզուները կը հաստատեն թէ ասոնք Թուրանական ծագում ունին և Արիական արիւնը կրող ազգեր տգիտութեան եւ բարբարոսութեան խոր քուռի մէջ ընկղմած միջոցին՝ Արարատի Թուրանեանները քաղաքակրթութեան մէջ հիանալի դերեր կը կատարէին։

Արարատեան Բարձրավանդակի այս հին բնակիչները հոն սկիզբէն մեծ, միացեալ, կեդրոնաձիւ տէրութիւն մը չըկրցան կազմել, այլ փոքրիկ տէրութիւններ շինեցին։ Աս պղտիկ տէրութիւնները կը կոչուէին Կիրրուրի, Գիւլան, Խափուչկիա, Մաննայ, Մուճաճիւր, Բիտ Զամանի, Ուրումէ, Նաիրի, Ուրարտու եւլն։ Ասիկա կը վերագրեն իրենց հին աւանդական սովորութիւններուն, նամանաւանդ Հայաստանի իւրերամերժ եւ նախանձոտ նախարարութիւններու հակառակութիւններուն և երկարատեւ վէճերու պատճառները և հետքերը այս հինաւորց ժամանակներու մէջ կը գտնենք։ Ի սկզբան այս պղտիկ տէրութիւններու մէջ ամենէն կարեւորը Նաիրի էր։ Ուրարտու այն

ատեն պղտիկ ըլլալով շատ կարեւորութիւն ստացած էր, առաջին օրերը այս տէրութիւններու միջև դաշնակցային կապ մը չըլլալով իւրաքանչիւր տէրութիւն իրարմէ անջատ և կզդիացած կերպով կ'ապրէր։ Այն հին դարերուն՝ հարաւային երկիրներու մէջ հին Բաբելոնացիք կամ Քաղդէացիք եւ Սումերեաններ կը բնակէին, և որովհետեւ այս վերջին յարձակողք երկրակալ պիտութիւններ չէին, հիւսիսի այն անկապակից տէրութիւնները բաւական ժամանակ խաղաղ կեանք կրցան անցնել հակառակ իրենց լճացեալ գոյավիճակին։

Քայց (Ն. Ք.) 1300 ին հիմնադրուան Մուսուլի նահանգին մէջ Ասորեստան անունով զինուորական պետութիւն մը երեւան եկաւ։ Ասորեստան առաջին անգամ քաղաքական նահանգ մըն էր. բայց չանցած քաղաքական լուծը թօթափելով մայր երկիրը նուաճեց, Տիգրիսի Եփրատի ընդարձակ հովիտներուն մէջ հզօր զինուորական տէրութիւն մը հաստատեց և սկսաւ արեւելեան, Սըելմտեան եւ հիւսիսային սահմաններուն վրայ կիցող բոլոր տէրութիւններու վրայ յարձակելու և զանոնք նուաճելու։ Այս Սելմական Սպարթայի առջեւ ռեւէ զօրութիւն չկրցաւ դիմանալ։

Ասորեստան լաւ պետական կազմակերպութիւն ունենալէն վերջը՝ սկսաւ հիւսիսի մէջ ապրող այս փոքրիկ պետութիւններու վրայ յարձակիլ։ Սաղմոնասար Ա. (1330-1310 Ն. Ք.) Թիկղատբալասար (1108-1050) երեք անգամ Նաիրիի քաղաքներուն վրայ յարձակելով՝ սոսկալի ջարդեր կատարեցին և անհաշուելի կողոպուտներով իրենց հայրենիքը վերադարձան։ Թիկղատբալասար Ա. էն յետոյ Ասորնաձիրաբաղ (885-860) երեք չորս անգամ Նաիրիի շրջակայ փոքրիկ տէրութիւններու վրայ յարձակելով մեծ կործանումներ եւ աւաւորութիւններ ըրաւ։

Այս փոքրիկ տէրութիւնները լաւ համոզուեցան թէ Միջագետքի այս անգութ Լակեդեմոնի միակ նպատակն է հիւսիսային այս փոքրիկ նորաբողոք տէրութիւնները խորտակել եւ անոնց երկիրները իրենին կցել:

Այս միջոցին, (Ն. Ք. 860), Ուրարտուի տէրութեան մէջ Արամէ կամ Արամու անունով իշխան մը երևան եկաւ, որ այս զինուորական պետութեան կատարած սարսափելի աւերներուն եւ անլուր վայրագութիւններուն վերահասու ըլլալով, ձեռնարկեց Արարատեան լեռնագաղտերու բոլոր իշխանութիւնները միացնել. եւ յաջողեցաւ: Արամէի այս դիւյազնական եւ հեռատես գործողութիւնները մօտէն հետազօտող Սաղմանասար Փ. պատերազմ հրատարակեց Արամէի դէմ եւ սահմանազլխի մօտ քանի մը քաղաքներ առաւ, բայց Արարատեան միութիւնը չկրցաւ խորտակել:

Լուսէպրիս, Արամէի որդին, եւ Սարտուրիս Ա., անոր թոռը, Արամէի ծրագիրը շարունակեցին եւ կանգնեցին Միջագետքի այս Գերմանիային դէմ միացեալ, զօրաւոր պետութիւն մը: Թէպէտեւ Ասորեստանի իր յարձակումները երբեմն, երբեմն կը շարունակէր բայց այս անառիկ ղղեակին տուած անոր մնասնէրը շատ աննշան էին:

Ն. Ք. 820 թուականին՝ Իսպուրիս Ուրարտայի գահը բարձրացաւ եւ իր որդին Մենուասը Արարատեան միացեալ բանակին Սպարապետ կարգեց: Հայր եւ որդի մէկ կողմէն եւ զրաւեցին շատ տարիներէ ի վեր Ասորեստանի յափշտակած գաւառները, եւ միւս կողմէն Արարատեան նորակազմ միութիւնը աւելի հաստատ հիմքեր վրայ դրին անոր սահմաններուն մէջ անհնազանդները հպատակեցնելով: Մենուասի գահակալութեան ժամանակ Արարատեան Արքայութիւնը Ասորեստանի հաւասար տա-

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Բժիշկները նոր տեսակ մը խուսթեան դարմանումին միջոցը գտած են: Այս խուսթեանը յառաջ կուգայ ականջի մէջի ոսկորներուն, մկաններուն եւ թմբուկներու մաշկին յանկարծական պըրկումէն: Բժիշկ մը կրցաւ այս խուսթեանը բուժել մկանները եւ ոսկորները եղեքտրական հոսանքի ենթարկելով:

Հիւսիսային Հոլանտայի մէջ բնաջնջուած կապիկներու բրածոներ գտնուած են: Ասով գիտունները կը հետեւցնեն թէ՛ Հիւս. Եւրոպան նախապատմական ժամանակներու մէջ բարեխառն կլիմայ մը ունեցած է, ինչու որ կապիկները ցուրտին չեն կրնար դիմանալ:

Եգիպտոսի մէջ 5000 տարուան հին գերեզման մը գտնուած է: Զարմանալին հոն է որ արուեստական ձեռքեր եւ ոտքեր գտնուած են զագազլին մէջ, որպէսզի մեռեալը հանգերձեալ աշխարհին մէջ կարենայ զանոնք գործածել: Մոմիան զարգարուած է ոսկիէ մանեակներով, ապարանջաններով եւ ժապաւէններով:

Միլիոնաւոր տարիներ առաջ մեռնող ձուկերու միջոցաւ ներկայ երկրաբանները գիտնին մէջ ջրամբարներ կը գտնեն: Զուրը ընդհանրապէս մասնաւոր տեսակ մը քարերու տակ կը գտնուի, որոնք ձուկի բրածոներէն շինուած են: Ծակիչ մեքենան գետինը կը մխրճուի եւ դուրս կը հանէ բրածոներու մնացորդներ՝ որոնց միջոցաւ գիտուններ

բաժութիւն, բայց անկէ շատ աւելի բնակչութիւն ունէր, եւ քաղաքակրթութեան տեսակէտով անկէ աւելի ծագեալ եւ զարգացեալ էր:

(Շարունակելի) Կ. ԳՈՒՆՏԱԳԾԵԱՆ

ակին ուղղութիւնը կը դառնան:

Գիտուններ փորձով դտած են թէ՛ ոչխար մը մեռնելէն վերջ կրկին բուրդ կ'արտադրէ, որ աւելի լաւ է ողջ եղած ժամանակը արտադրածէն: Ոչխարին մեռնելու ժամանակ միսի կտոր մը քիմիական ուժերու շնորհիւ բնալուծաւորանին մէջ ողջ կը պահուի: Եթէ ոչխարին մորթը քիմիական մասնաւոր կերպերով կը խնամուի կը տեսնուի որ մորթը մեծ քանակութեամբ բուրդ կ'արտադրէ:

Գիտուններ ելեքտրական ուժով բոյսերու սերմերը կը տաքցնեն որով բոյսը արագ կ'աճի:

Եւրոպայի մէջ ժողով մը կազմուեցաւ հնարելու համար նոր տեսակ մը բատիոն որ պիտի հաղորդէ զործուած ոճիւնները և պիտի յայտնէ ոճրագործները: Որպէս մեծ կեդրոնատեղի Պերլինի կայարանը ընտրուեցաւ: Այսուհետեւ այս բատիոն ամէն կողմ պիտի հեռարձակէ մարդասպանութեան յատուկ տեղեկութիւններ և նոյնիսկ պիտի բացատրէ ոճրագործին լուսանկարը և անոր մատերուն հետքերը:

Պէրլինի մէջ հրդեհէ փրկելու համար տեսակ մը կողով հնարուած է, որուն մէջ հրդեհի պահուն հիւանդը կը դնեն և պարաններով զայն պատուհանէն վար կ'իջեցնեն: Այս զործողութիւնը կը կատարուի և ուէ անձ հրդեհի զոհ չ'ըլլար:

Գերման դիտուն մը հնարած է տեսակ մը ջուլթակ, որ մարդու ականջի նմանութիւնը ունի և հիմակուայ ջուլթակներէն շատ աւելի լաւ եղանակ կը հանէ:

Գործարաններուն մէջ աշխատող բանւորներուն աչքերը շատ կը յոգնին: Ուստի գործարանատէրներ իրենց գործարանին մեքենաները, առարկաները, պատերը, գետինը տարբեր զուարթ

գոյներով կը ներկէն և որ աչքին յոգնութիւնը կը բարեւաւեն:

Կարելի եղած է չինել «Moving talkie» մը մարդկային ձայնէն և կամ ուրիշ ձայներէ: Այս մեքենան պիտի գործածուի դպրոցներու և զուէճներու մէջ լեզու սորվեցնելու համար: Talkie շատ յստակ կերպով ամէն լեզուի բառերը կ'արտասանէ:

Աստղագէտները ամհնամեծ հեռագիտակով աստղերը դիտելին և կ'ըսեն թէ՛ միւս տիեզերքներուն մէջ գտնուած աստղերը մէկ երկվայրկեանի մէջ 11000 մղոնահագին արագութեամբ կ'ընթանան և անոնց լոյսը միզի հասնելու համար 120 միլիոն տարի պէտք է: Այս աստղերուն արագութիւնը 100ին 60 համեմատութեամբ աւելի է մինչև հիմա զբաղուած աստղերու արագութիւնէն: Ուստի շատ հեռաւոր նիւթեր կրնան ուժգին արագութեամբ ուժ արտադրել, ոչ թէ անոնց շատ շարժելուն համար է, այլ անոնց հեռաւորութեան միջոցը անոնց առիթ կուտայ այս արդիւնքը յառաջ բերելու:

Տանիմարքա 1361 ին յարձակեցաւ (Gothland) Կոթլանտի վրայ, որուն յաղթեց և անոր տիրացաւ: Աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ այդ պատերազմին 1600 հոգի մեռած և (Black Death) ժանտախտի պատճառաւ կարելի եղածին չափ շուտ թաղուած են իրենց բոլոր պատերազմի մթերներով: Այժմ այդ դաշտը պեղուած է և երեւան ելած են միջնադարեան մարդոց պատերազմի վերաբերեալ ամէն տեսակ գործիքներ:

Թէքսաս ազադակին մէջ գտնուեցաւ վիթխարի սողունի մը մնացորդները, որուն երկայնութիւնը մօտաւորապէս 70 ֆտ է: Հոս ապրած է 20,000,000 տարի առաջ և հաւանական է որ 17,500 հոգա կշռէ:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՌԵՏ. ԼՈՒՐԵՐ

**ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԻԱՑԵԱԼ
ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ**

1911ին լուկ կրթական ծրագրով հե միայն Միսիոնար անդամներու մասնակցութեամբ կազմուած է միութիւնս, որ այսօր որդեգրած է նաեւ «Աւետարանչական» ուղղութիւն մը եւ ընդունած է տեղական եկեղեցիներու մասնակցութիւնը:

Հիմնարկութենէն 20 տարիներ վերջը, այսօր, անոր կ'անդամակցին Սուրիոյ եւ Պաղեստինի զաշտէն 24է աւելի Միսիոնարական Ընկերութիւններ, եւ մօտ տասը հատ տեղական Աւետարանական Միութիւններ: Հայ Աւետ. Միութիւնը այս տարի ներկայացուցին Վերք. Ս. Մանուկեան, Ե. Հատիտեան, Ե. Կէօքկէօղեան եւ Պատ. Յով. Արզարեան:

Երկու տարին անգամ մը կը գումարուի Սոյն ժողովը, որ այս անգամ տեղի ունեցաւ Պէյրութի Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ մէջ, Մայիս 6-7, 60 պատուիրակներու մասնակցութեամբ:

Ա. Նուիրման ժամեր. — Ամերիկեան Համալսարանի այս տարուան այցելու Կրօնքի Դասատուն Փրոֆ. Միլըր Պըրոզ «Բաժանման Պատերը Քակենք», «Զի քննադատենք այլ Ապրի'նք», եւ «Գործիչն ու իր Անձնաւորութիւնը» նիւթերու շուրջ խիստ շահեկան պատգամը, Մր. Ֆաքսի «Աստուծոյ Սպասել եւ միշտ Ազօթել» նիւթով սրտաբուլի կոչը, եւ Մր. Րիկիի տարբեր գաշտերու եւ գործերու համար աղօթքի հրաւերը, իսկապէս ոգեւորեցին ներկաները:

Բ. Գործի դաշտերէն տեղեկատուութիւններ: Մարդ կը ցնծար, Ամերիկացիի, Անգլիացիի, Իրլանտացիի, Սկոզիացիի, Տանիմարացիի, Եթովպացիի, Զուլիգիւրացիի, Սուրիացիի, Հայու եւ այլնի մէկ նպատակի ուղղուած անխոնջ ջանքերուն:

Ջերուէն մի ամփոփ տեղեկատուութիւնը լսել: Գրեթէ բոլորն ալ քաջալերական էին:

Գրութիւններ: — Զորս տարբեր անձերու կողմանէ՝ Միութեան յառաջխաղացումը, պատասխանատուութիւնը, կարելիութիւնը եւ գործակցութիւնը շօշափող շատ խնամուած յօդուածներ կարդացուեցան, եւ անոնց շուրջ խօսակցութեան ժամանակ տրուեցաւ:

Դ. Ընտրութիւններ: — Գործը աւելի բեղմնաւոր եւ մէկ ուղղութեամբ յառաջ տանելու համար տարբեր յանձնախումբեր ընտրուեցան:

Աւած տպաւորութիւններս: —

1. Միայն Աստուծոյ Հոգին է՝ որ կըրնայ միացնել մարդիկը եւ զանգուածները: Քաջ գիտցայ թէ, Միացեալ Միսիոնարական ժողովը ասոր մի կենդանի փաստն է:

2. Դաշտի ընդարձակութիւնը եւ գործի դժուարութիւնը արգելք մը չէ իրական յաղթութեան եւ Արքայութեան տարածման, երբ մարդիկ Սր. Հոգիով միանան եւ մէկ ճակատով յարձակին խաւարի իշխանին վրայ:

3. Հայ Աւետարանականներու մեծ գործ ունինք այս դաշտին մէջ: Այո շատ բաներ ունինք սորվելիք այս մեր օտար եւ տեղացի պաշտօնակիրներէն. սակայն ունինք շատ բաներ ալ սորվեցնելիք, մեր նիւթական աղքատութեամբ, եւ հոգեկան հարստութեամբ,

Պէյրոս ԵՆՈՎՔ ԿԷՕԲԿԷՕԶԵԱՆ

ՍԷԼԱՆԻԿԻ ՀԱՅ ԱՌԵՏ. ԵԿԵՂԵՑԻԻ
ՀՈՎԻԻԸ, ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ կըզդէ: —

Սեւանիկի Աւետարանական Եկեղեցին գրեթէ աւարտած է վիճակագրութիւնը. թէպէտեւ տակաւին սակաւաթիւ չարձանագրուողներ ալ կան:

Մայր եկեղեցւոյ անդամներէն շատեր ամուսնացած են ժամանակին, կամ վերջին 15 տարիներու ընթացքին, Աւետար

րանական համայնքին անդամութիւններով: Արձանագրուելու համար այսպիսիններուն ըրած դիմումը բացարձակապէս մերժուած է, և թելադրուած է նաև իրենց թէ փարին ու հաւատարիմ մնան իրենց կողակիցներուն պատկանած եկեղեցիին:

Արձանագրուող ընտանեաց թիւն է 102, բաղկացած 365 հոգիներէ, որոնց 185 ը այրեր իսկ 180 ը կիներ են: Տարիքին համեմատ հետեւեալ կերպով կը դասաւորուին, 1-15 տարեկան 110 հոգի, 16-35 տարեկան 115 հոգի, 36 տարեկանէն վեր եղողներ 140: Եկեղեցւոյ անդամներուն թիւն է 50 իսկ անդամութիւններունը՝ 55: Դպրոցական տարիքի մէջ գտնուող մանուկները կը յաճախեն ինը տարբեր դպրոցներու: Համայնքը կը ցաւինք թէ չունի իր սեպհական դպրոցը:

Ամբողջ համայնքին մէջ հայերէն չի հասկցող 15 հոգի ունինք միայն:

Ընտանեաց կէսը քաղաքին մէջ իսկ մնացածը արուարձաններու մէջ կը բնակին: Ասոնք Սեւանիկ հաւաքուած են թիւրքիոյ 34 տարբեր քաղաքներէն և աւաններէն:

Ժողովուրդին մեծ մասը գործաւորներ են, ունինք բաւականաչափ արհեստաւորներ, ինչպէս նաև վաճառականներ, զանազան պաշտօնականեր, ուսուցիչներ, ուսուցչութիւններ և աւետարանչութիւններ: Ունինք նաև մէյմէկ հատ, բժիշկ, մանկաբարձ, ապահովագրիչ և երաժիշտ:

Համայնքէս ընտրուած մասնաւոր յանձնախումբ մը ներկայիս կ'զբաղի պատրաստելու համար՝ կիրարկելի և յարմարագոյն եկեղեցական կանոնադիր մը:

Աւագ շարժումն իրիկունները՝ մասնաւոր աղօթաժողովներ ունենալէ յետոյ, Զատիկի կիրակին Վեր. Հօկոսի ըս-

պատարկութեամբ Ս. Հաղորդութիւն մատակարարուեցաւ:

Զատիկի առթիւ Ե. Ք. Զանաւորացի եռանդուն անդամներով և ժրջան համակիրներով միատեղ՝ ու Միս Ա. Նուհանունի ըրած մասնաւոր կարգադրութեամբ, այցելելինք երկու հաշաշատ արուարձանները՝ Երկուքին մէջն ալ Զատիկական պաշտամունքներ կատարելով շնորհաւորեցինք մեր սպակակցները: Երիտասարդութիւնը թագուն ոյժերով լեցուած է: Հոս ասոնք մասնաւորապէս ընտրուած երգերը եռանդով երգելով մթնաշուրտը աւելի եւս ոգեւորեցին: Հոգեւորնչ հրգեցողութիւնը ինքնին հմայիչ լեզու մըն է. ազգու և հասկնալի: Արուարձաններէն մէկուն մէջ (Հարման Գիւղ), պետական հիւանդանոց մը կը գտնուի: Հոս կան 75 հիւանդներ որոնց 55 ը՝ թոքախտաւորներ. ասոնց մէջ կան նաեւ հայեր: Յիշեալ հիւանդանոցը այցելելով բաւկին մէջ երգեցինք Զատիկական երգերէն: Հիւանդներէն շատեր զգացուելով արտասուալից, և սրտաբոխ շնորհակալութիւններ յայտնեցին:

Երկու երիտասարդութիւնը մեծ յայտեր կը ներշնչէ մեզի:

Այս տարի 51 քոյր և եղբայրներ եկեղեցիին զանազան գործերուն մէջ գործօն դեր ստանձնած, աշխատանք կը թափին անոր ներքին կեանքի սրբութեան և պայծառացման:

Յիշելու արժանի է քաղաքս գտնուող Եռեւտացի միսիոնարութիւն, Սր. Ալմա Նուհանուն, որ ի մէջ այլոց վերոյիշեալ երկու արուարձաններուն մէջ գտնուող հայ գաղթականներուն, իր կարիքութեան սահմանին մէջ նւթապէս օգնելով հանգրծ կ'աշխատի նաև անոնց կրօնակրթական մակարդակը բարձրացնել:

Ապրիլ 20. 931

ՀԱՄԱՐԱՆԱԾԻ ՀԻՒՆԴԱՆՈՅԸ

Երէկ համամայն թողարտւած են՝
բուհականացի աշակերտի Պէյրու-
թի Միսիսիսիսիսիսիս կարգադրութեամբ
շարժութիւն անգամ մը հոգեւորական մը
հիւանդանոցը պիտի այցելէ և հոն հո-
գեւոր պաշտօն պիտի կատարէ։ Այս
անգամ այս բաղդը ինծի վիճակեցաւ։

Հիւանդանոցը լեռներու մէջ, ծովէն
300 մէկը բարձր լեռնադաշտի մը փոք-
րիկ բլուրին վրայ շինուած ըլլալով,
զմայլիկի տեսարան և միշտ հովասուն
գիրք ունի։ Երկու խոշոր ու զլխաւոր
չէնքիւրէ վատ, բազում միայնակ չէն-
քիւր ունի, որոնք 1, 2, 3, 4, անկող-
նոց զատ զատ սենեակներէ կը բաղկա-
նան։ Մաքրութիւնը վերջին ծայր է,
սենեակներու և ամաններու մէջ, ոչ ալ
գաւթի ռեզ աղտոտութիւն գտնել ան-
կարելի է։ Կիրակուրները բազմաթիւ
սակ և իւզոտ են։

Կէսօրուայ ճաշ հոն ըրի, սեղանի
վրայ կար խորոված, գոմոյ լիցք,
սարմա, տապակած սիւնիկ, բրինձ բի-
լով, թարմ լուրիա և տապա մածուն
Հիւանդանոցը կերակուրը կը տրուի
հիւանդապահ Օր. Գեղանոյշի կողմանէ
անոնց պէտքերն համեմատ և վրայէն կը
տրուի եփած սիւնիկ և նարինջ։

Ընդ. տեսչուհին, Տիկ. Լենսինկ,
ծէր բայց առողջակալմ, միշտ խնդու-
մերիս Միսիսիսիսիսիսիս մը, Աղեքսանդր-
բիս ծնած ու Գահիրէ ամուսնացած Ա-
մերիկուհի մէ, Արաբերէնը ու Գաղիերէ-
նը իր մայրենի լիզուին պէս իւրացու-
ցած է։ Ինծի հետ այցելեց բոլոր հի-
ւանդները։

Փողովքի ատենը ժամը 8 է. սակայն
ես երկու ժամ ոտքով քաշելով հաղիւ
ժամը 10.15ին հասայ. ուստի հիւանդ-
ները իրենց քով այցելեցի առանձինն,
ոմանք խնդրեցին որ իրենց անունները
գաղտնի պահեմ, չըլլայ որ մեր ազգա-

կանները լսեն ու վշտանան», ըսին ա-
նոնք։ Հոն գտայ 40ի մօտ հայ երկսեռ
հիւանդներ և երկու հիւանդապահ օրի-
օրներ։ Հիւանդներուն տարիքն է 19-
45։ Հոս կը պառկին երկու շարժէն
մինչև 12 տարիէ ի վեր։ Իրենց ծնըն-
դավայրերն են, Եգիպտոս, Մարաշ,
Այնթապ, Կիւրլան, Սուրբէկ, Սիս,
Պաղտատ, Բիւլիս, Կեսարիա, Սարքերդ,
Զէյթուն, Սերաստիա, Գասթեմոնի։ Ա-
ռանց բացառութեան ամէնն ալ կարգաւ,
գրեւ զիտեն, և մէկ բացառութեամբ ա-
մէնն ալ Ս. Գիրք ունին ու կը կարգան։
Մէկը յուսահատ է։

Բժշկապետն է Պէյրութի Ամերիկեան
հիւանդանոցի բժշկապետներէն անուա-
նի Տոքթոր Նիլսո, որ շարժութիւն երկու
անգամ կ'այցելէ հիւանդանոցը ու իւ-
րաքանչիւր հիւանդը կը քննէ։ Օգնու-
կանները՝ Ա. հիւանդանոցէն՝ կը զրկը-
ւին ամսուայ մը համար։

Այս հաստատութիւնէն ամենէն շատ
օգտուողներն են Հայերը. միւս բոլոր
հիւանդներու գումարը հայիւրէ պակաս
է։ Պէտք է համամայն մեր ազօթքիննիւթ
ըլլայ, ինչպէս որ է Մամուլիէյն։ Հի-
ւանդները զուարթ պահելու համար շատ
յարմար է որ կարճ և օգտակար հայերէն
ու թրքերէն զրքոյկնիւր ու տեսարկնիւր
զրկուին, մանաւանդ Սաղմոսները գի-
րենք շատ գոհ պիտի թողուն։ Ժամը 2էր՝
բաժնուեցանք գոհանալով Աստուծոյ մեր
առողջութեան համար և խնդրելով իր-
մէ շնորհք հիւանդներու համար։

Զանդի

Յ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԱՄՍՈՅԱՅ մէջ երկու Անկիլոզան Եպիս-
կոպոսներ այցելեցին քաղաքս, Եպիսկո-
պոս Կոր և Կարսկոպոս Մաղինէն Ե-
րուսաղեմի։ Վերջինը ընթացողով
եղած հրաւերին իմամնուէլ Հայ Աւետ.
եկեղեցիին մէջ քարոզած է։

«ՊՅՁ ՀԱՅ ՍՔՈՒԼ»-Ի ԿԵԱՆՔԷՆ

Մայիս 4ին աթոռակից Կաթողիկոս Բարսեղ Ա. Կիւլէսէրեան ընկերակցութեամբ Հալէպի Առաջնորդ Սիւրբեան Եպիս. Ի այցելեց դպրոցս եւ աշակերտներուն խօսեցաւ շեշտելով կրթութեան գաղափարապաշտ եւ ազգայնական գիծերը:

Նոյն օրը կէսօրէ ետքը հանրային կրթութեան քննիչ Մ. Պէլան աշակերտներուն խօսեցաւ նիւթ ունենալով «Հանրային կրթութիւնը Ֆրանսայի մէջ»:

Մր. Ուլեմ, Անատոլի Գոլէճի (Սեւանիկ) նախագահին օգնականը, այցելեց դպրոցս Մայիս 18ին: Այցելուն կրթական քննութիւն մը կը կատարէ Մերձաւոր Արեւելքի մէջ:

Մայիս 18ի կէսօրէն ետքը Փրոֆ. Զ. Պէզճեան խօսած է նիւթ ունենալով «Թէ ինչո՞ւ Հայերս մեր Դատը Կորսնցուցինք»:

Մայիս 14ին տեղի ունեցաւ միջդպրոցային տարեկան մարզահանգէսը, որուն մասնակցեցան դպրոցիս երեք բաժինները (Գոլէճ, նախապատրաստական, կրտսերներ), Գոլէճ Լաիք, Սուլթանիէ, Գոլէճ Թէր Սէնթ, Երեւական Պորտի Դպրոցը, Գոլէճ Մարրիսթ, Յոյն Կաթողիկէներու Գոլէճ: 98 ուսուցիչներ մրցումներու մասնակցեցան որոնց 42 հայեր էին, եւ 33 Պոյզ Հայ Սքուլէն: Միջին նիշերու բարձրագոյնը (33) չահեցաւ Պ. Հայ Սքուլի Գոլէճի բաժինը, Բ. հանդիսացաւ Գոլէճ Լաիք (23) աւերորդութիւնը (22) չահեցաւ Պոյզ Հայ Սքուլի Կրտսերներու բաժինը: Նախկին տարիներէն շատ աւելի հանդիսատեսներու բազմութիւնը հոն ներկայ գտնուեցան:

1932ի Կ. ԴՊՐՈՑԻ դասերուն համար պատկերներ ունենալ փափաքողները կրնան զանոնք ստանալ թէ մայիս 30էն առաջ իրենց ապսպրանքներ ընեն սա

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Վեհ. Ս. Սրբազան Խապահան եւ Աթոռակից Կաթողիկոս Բարսեղ Ա. Սրբազան Մայիս 10 ին հասած են Կաթողիկոսարան Անթիլիաս: Ճամբուն վրայ Ջահլէ ծովածաւալ բազմութիւնը դիմաւորած է զոյգ հայրապետները: Կիրակի առաւօտ աթոռակից Սրբազանը քարոզած է Ջահլէի նորակառոյց Եկեղեցիին մէջ եւ կէսօրէ ետքը Պէյրութէն դիմաւորելու եկող թափօրին հետ մեկնած է:

Վեհ. ուղեւորները ժողովրդային մեծ եւ համակրալիք ցոյցերու առարկայ եղած են. ուստիկանները կարգապահութեան հսկած են: Ս. Նշան Եկեղեցին մասնաւորապէս զարդարուած է, ուր աթոռակից Վեհափառը իր կարճ պատգամը տալէ ետքը մեկնած է Անթիլիաս, իրեն հետեւած է թափօրը: Ընծայարանի մէջ ընդունուած են պատշաճ կերպով ՇահէՄ. Վրդ. Ի եւ սաներու կողմանէ:

ՀՍՍ ԱՆԿԵԼԷՍԻ Գեթսէմանի Բող. Եկեղեցիին մէջ Ջատիկին՝ սրբազան երգահանդէս մը սարքուած է առաջնորդութեամբ Տիար Յարութիւն Սարկաւազի, որ իր 34 անդամներէ բաղկացեալ երգեցիկ խումբով սիրելի եւ տպաւորիչ անակնկալ պատճառած է: Մայր եկեղեցիի «Սիրնի Որդիք» եւ «Գովեա Նրուսաղէմ» շարականները քառածայն երգուած են:

ԶԸԼՍԻԻ մէջ մեծ մասամբ Ամերիկա ծնած եւ մեծցած հայ երիտասարդները մարմնամարզական միութիւն մը կազմած են: Ժողովները հայերէն լեզուով կը կատարուին:

ԵՐԵՒԱՆԻ մէջ խուլերու դպրոցին չէնքը պաշտօնապէս բացուած է:

հասցէին Rev. G. H. Scherer B. P.
582, Beyrouth, Liban,

Ե. Բ. ԶԱՆԻՑԻ ԷԶԸ

Ե. Ք. Ջանից ընկերութիւններու Միութեան կողմանէ յայտնուած փափաքը գոհացնելու համար «Նոր Աւետարեւր» ի խմբագրութիւնը յետ այսուայս էջը սիրով յատկացուցած է յիշեալ Միութեան որ պիտի գործածէ զայն հայերկսեռ պատանիներու և երիտասարդներու ամէն կերպ օգտին համար։ Այս բաժնին մէջ պիտի հրատարակուին երկտասարդներու և «Ջանից» ի վարիչներու կողմանէ գրուած առաջնորդող գաղափարներ, թեւադրութիւններ, թեւադրիչ պատմութիւններ, հոգեւոր խորհուրդներ և Միութեան ընթացիկ կեանքէն լուրեր։

Ծ. ԽՄԲ

ԱՄՏՈՒԱԾԱՇ ՈՒՆԶԻ ԳԱՆՁԷՆ

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԲԱՆԵՐ

«Եւ Տէրը Դէպէօնի ըսաւ, Այն Երեք
Հարիւր մարդոցմով. . . ձեզ պիտի ազա-
տեմմի» Դատ. Ի. 7. (կարդա՛ր բոլոր գլուխը)

կերակցութեան կազմութեան 50րդ տարեգարձը: Եկեղեցին պարզարուած էր պարզ և պատշաճ կերպով: Քաղաքի բոլոր «Ջանից» ներք, մէջը ըլլալով նաև արաբախօսներու ընկերակցութիւնը, իրենց յատուկ տեղերը գրաւած էին ամպիոնին առջեւը: Անդամներէ զատ, ներկայ էին Սուրիոյ Աւետ. Միութեան տարեկան ժողովին համար քաղաքս զբոսնող հովիւներ, քարոզիչներ և պատուիրակներ, ինչպէս նաև հարիւրաւոր պարոններ և տիկիններ որոնք տարիներ առաջ անդամակցած են «Ջանից» ի: Պաշտամունքին կը նախագահէր Պատ. Ա. Հատիտեան:

Առաջին խօսողը եղաւ Պատ. Թ. Արզարեան որ ամփոփ և հրապուրիչ կերպով «Ջանից»ի պատմականը ըրաւ և շեշտեց անոր գործին կարեւորութիւնը Սիւրիոյ մէջ: Ապա յաջորդաբար բեմ հրաւիրուեցան Պր. Պուտուգեան (Հալէպ Բեթէլ) Պր. Աւագեան (Տամասկոս), Պր. Ե. Թովմասեան (Հալէպ Էմմանուէլ), Պր. Խ. Կիւզէլմեան (Գահիրէ), Տիար Ապուտ Հաննէ . . . (Հալէպ, Արաբախօս), Պր. Տ. Քասուէնի, (Քէսապ) և Մր. Քարլթըն (Հալէպ) որոնցմէ իւրաքանչիւրը շնորհաւորական և քաջալերական կարճ խօսքեր ուղղեցին անդամներուն և շեշտեցին ընկերակցութեան նպատակին վեհութիւնը և գործին սրբութիւնը: Օրուան բուն բանախօսն էր Մր. Բիկզ որ մաքուր հայերէնով և զուարթ թոնով մը խօսեցաւ «Ջանից» ին պարտքը առ Աստուած և առ եկեղեցի» նիւթին շուրջ որուն ամփոփումը պիտի երեւնայ այս էջերուն վրայ: Երգիչ խումբը մերթ ընդ մերթ երգեց հոգևոր երգեր և նուազախումբի կողմէն յաջող կերպով նուագեց մի քանի եղանակներ: Ժողովը վերջացաւ Վեր. Ե. Քասուէնի աղօթքով:

ՊԱՏԻԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՍՈՒՐԻՈՅ Ք. ՋԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Սուրիոյ տարբեր կողմերը կազմուած Ք. Ջանիցները իրարմէ տեղեակ պահելու և անոնց մէջ գործակցութիւն մը ստեղծելու պէտքը զգացուած էր ամէն կողմ և շատոնց: Եւ ահա առաջին հրաւերը եկաւ Պէյրութէն 1930 ին, ուր հաւաքուեցան Հալէպ, Գահիրէ և Պէյրութը ներկայացնող 12 պատուիրակներ, որոնք գործակցութեան համար անհրաժեշտ եղող նախնական քայլերու մասին խորհրդակցութիւններ կատարելուն: Այս տարի, Ապրիլին, նման խորհրդակցական ժողով մը զուգարուեցաւ Հալէպի մէջ մասնակցութեամբ՝ Գահիրէն, Պէյրութը, Տամասկոսը, Հալէպը և Քէսապը ներկայացնող քսան ութը պատգամաւորներու: Ժողովը կրցաւ ունենալ միայն վեց նիստ, ուր կարգացուեցան տարբեր ընկերակցութիւններու տեղեկագրութիւնները և խորհրդակցութեան գրուեցան հետեւեալ նիւթերը: «Մեր երիտասարդները եկեղեցիին մէջ», «Մեր երիտասարդները եկեղեցիէն դուրս», «հոգևոր արթնութեան մը պէտքը մեր երիտասարդներուն մէջ», «ինչպէս կրնաք Ջանից ընկերակցութիւններու մէջ գործակցութիւն ստեղծել», «Ջանիցի գաղափարներուն ծաւալումը գրականութեամբ», «Մեր ընկերութիւններու մէջ ընկերութեան ոգին», «կանոնադրի սրբագրութիւն»: Նիստերուն ներկայ էին հարիւրաւոր երիտասարդներ. բոլոր ժողովները անցան խիստ կանոնաւոր, և տրուեցան շարք մը գործնական որոշումներ, որոնց առիթ պիտի ունենանք անդրադառնալու:

ՊԱՏՐԱՍՏՈՒՆ՝

Մի քանի տարիներէ ի վեր Լոնտոնի մէջ գործադրութեան գրուելու սկսած է «Երկնային Նշան» (sky sign)

կոչուած քարոզելու նոր մեթոտ մը, որուն նպատակն է հասնիլ այնպիսի զանգուածներու որոնք եկեղեցւոյ անմիջական ազդեցութենէն դուրս և հեռու կ'ապրին:

Մեծ մայրաքաղաքին ամէնէն բանուկ հրապարակներուն մէջ շտեղը, բարձր աշտարակներուն վրայ ելեքարական լուստերներով Աւետարանէն համարներ կը գրուին, համարներ՝ որոնք կը պարունակեն ուղղակի Քրիստոսի պատգամը, և հաղարուոր մարդիկ կ'ամայակամայ կը տեսնեն ու կը կարդան այդ համարները երբ անոնք կ'անոնաւոր ընդմիջումներով կը բացուին ու կը գոցուին:

Մօտերս աշտարակի մը վրայ գրուած էր Ամովս 4. 12 համարը: «Պատուաւորաւորուէ՛ քու Աստուածդ զիմաւորելու»: Մարդ մը որ շատ մեղսաւից կեանք մը ապրած էր պատահաբար կարգաց զայն: Այդ խօսքերը արձագանգ գտան իր հոգեւոյն խորքերը. պատուեցաւ միայ փողոցին այդ անկիւնը. իր անպէտ կեանքին ընդդէմ գրուածները շարժապատկերի նման անցան աչքերուն առջեւէն. նա գիտէր որ պատրաստ էր իր Աստուծոյն զիմաւորելու, ուստի իր ներքին մարդը խռովեցաւ: Այս շուտով մէջ քայլերը ուղղուեցան լոռատոնի ուրիշ մէկ կողմը. նա կը քալէր առանց գիտնալու թէ ո՛ւր կ'երթար: Յանկարծ ականջին բամբ և ազդու ձայն մը հնչեց. «Պատրաստուէ՛ քու Աստուածդ զիմաւորելու»: Դուռը վերցուց. եկեղեցիի մը պատուհանին առջեւ կը գտնուէր: Քարոզիչը այդ համարին վրայ կը քարոզէր և ճիշդ այդ պահուն կը կրկնէր իր բնաբանը. հրաշալի՜ գուգադիպութիւն: «Պատրաստուէ՛...» Այ՛ չէր կրնար հանդուրժել. ներս մտաւ: Հազիւ կրցաւ քարոզին վերջաւորութեանը սպասել, Ոտքի ելաւ: Աստուծոյ և մարդոց առջեւ խոստովանեցաւ, արցունքներով ուխտեց որ պիտի պատրաստուի: Երիտասարդ, այսօր կրնաս պատրաստուիլ... գուցէ վաղը ուշ ըլլայ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազգայնաբանութիւն Չարլս Տիֆլնսի
գրութեան

ԿԼՈՒԽ Դ.

Խօսողներն ու մտիկ ընողները ցըրուեցան, ու գացին ուրիշ խումբերու միացան: Սքրուճ կը ճանչնար զանոնք, ուստի Ոգիին նայեցաւ այս քաներուն նշանակութիւնը իրմէ իմանալու համար:

Սակայն մէկէն սոսկալով ետ քաշուեցաւ, որովհետեւ տեսարանը փոխուէր էր, և հիմայ իր առջեւ անկողին մը կար, աղքատիկ, անվարագոյր անկողին մը, որուն վրայ, պատուաւոր վերմակին տակ ծածկուած բան մը պառկեր էր, որ, թէեւ անխօս, սակայն սարսափելի լեզուով մը իր ինչ ըլլալը կը յայտնէր:

Սենեակը խիստ մռթ էր, այնպէս որ ճշտիւ կարելի չէր տեսնել, թէեւ գաղտնի գզացման մ'անսալով Սքրուճ աչքերը խոշոր բացած կը ջանար տեսնելու թէ ինչ տեսակ սենեակ մըն էր: Դրանք աղօտ լոյս մը շիտակ անկողինի վրայ կ'իյնար, ուր մեռած մարդու մը մարմինը տարածուած էր, կողոպոււած, լքուած, որուն վրայ նայող մը իսկ չկար, ան լացող մը իսկ չունէր:

Սքրուճ Ոգիին նայեցաւ, որուն ձեռքը մեռելին գլուխը ցոյց կուտար, ծածկոցը այնքան անխնամ կերպով դրուած էր որ եթէ Սքրուճ մատին ծայրովը դպչէր, կրնար դէմքը բացուիլ: Պահ մը խորհեցաւ թէ որքան դիւրաւ կրնար երեսին ծածկոցը վերցնել, եւ փափաքեցաւ ալ որ վերցնէ, սակայն զգաց որ զայն վերցնելու կարողութիւն չունէր:

Ո՛հ, մթին, ցուրտ, ահե՛ղ մահ, որ քու սեղանդ շինե՛ր ես հոս, ու քու արհաւիրքներովդ զայն պատեր ես, ահա՛ քու իշխանութիւնդ: Սակայն դու չես կարող մէկմազին իսկ զպշիւ այն մարդուն՝ որուն մահուան անկողինը չըջապատած է զինքը սիրողներու ու յարգողներու բողբոսութեամբ մը: Դո՛ւն, ո՛վ մահ, չես կրնար քու գարշելի դրոշմդ կնքել այնպիսիներուն գէմքին վրայ: Սյո՛, անոնց ալ ձեռքերը ծանր անշարժ են, անոնց ալ բազկերակը կեցած է, սակայն չէ՞ անոնց ձեռքերը ատենօք բաց էին, առատածեռն էին, անկեղծ էին, անոնց սիրտերը քաջ էին, տաք էին, փափկազգաց էին, անոնց բաբախող երակներուն մէջ ճշմարիտ մարդու արիւնը չըջան կ'ընէր: Զա՛րկ, ով Ստուեր, զա՛րկ ու տեսնենք թէ ասոր վէրքերէն ի՞նչ բարի գործեր պիտի դուրս գան, որոնք ատենօք այս աշխարհիս մէջ անմահութիւն սերմանեցին:

Ոչ մի ձայն այս բառերը հնչեց ըՍքրուճի ականջին, սակայն և այնպէս սփիւյր կը լսէր զանոնք մինչդեռ անկողնոյն վրայ կը նայէր, ու կը մտածէր... արդեօք ի՞նչ պիտի ըլլար այս մեռեալին ամենամեծ մտածմունքը, եթէ յանկարծ մէկը զինք կարենար արթնցնել: — Ազահութիւն, անգթութիւն, անձկութիւններ: Եւ միթէ այս բաները զայն ճշմարտապէս հարուստ վախճանի մը կըցաֆն բերել: Զէ՞ որ ամէն բանէ զրկուած կը պառկէր մութ, պարապ տանը մէջ, մարդ մը, կին մը, մանուկ մը չկար հոն՝ որ ըսէր թէ այս մարդը սա կամ նա կերպով ինծի բարիք ըրած էր, և կամ իր մէկ անոյշ խօսքին փոխարէն՝ զոնէ հիմա ալ պէտք է իրեն բարիք ընեմ: Կատու մը զուռը կը ճանկռէր, ու կրակարանին տակ մուկերուն կրծելու աղմուկը կը լսուէր, մահուան սենեակին մէջ ա-

սոնք ի՞նչ կը փնտռէին, և ինչո՞ւ այնքան անհանգարտ ու շփոթ վիճակ մ'ունէին: . . Սքրուճ չէր համարձակեր խորհիլ:

«Ոգի՛, թոյլ տուր որ սա մեռածին հանգէպ կարեկցութիւն ցոյց տուող մը նշմարեմ», ըսաւ Սքրուճ, «եթէ ոչ այդ մութ սենեակը ուր քիչ մը տառջ կը կենայինք, յաւիտեան չպիտի հեռանայ աչքիս առջեւէն:»

Ոգին առաջնորդեց զայն քանի մը փողոցներէ, որոնք ծանօթ էին իրեն, ու երբ կը յառաջանային, Սքրուճ աստանդ կը նայէր ինքզինք գտնելու համար, բայց երբեք ոեւէ տեղ չկրցաւ տեսնել ինքզինքը: Հուսկ յետոյ խեղճ Պօպ Բրէչլիթի տունը մտան, հոն՝ ուր առաջ անգամ մը այցելած էր, ու տեսաւ մայրն ու մանուկները կրակին բոլորտիքը նստած:

Լո՛ւռ, խիստ լուռ. ատենօք այնքան զուարթ աղմուկներով խաղացող մանուկները անկիւն մը քաշուած ու քարի պէս լուռ ու անշարժ Պետրոսի կը նայէին, որուն առջեւը գիրք մը կար: Մայրն ու աղջիկները կարով կ'զբաղէին, սակայն անոնք ևս բոլորովին լուռ էին:

«Եւ անիկայ մանուկ մը առաւ, ու անոնց մէջտեղը կայնեցուց:» Սքրուճ այս բառերը ուրտեղ լսած էր... անշուշտ այս տեսածը երազ չէր: Անշուշտ տղան կարգացած էր, երբ ինք ու Ոգին սեմէն ներս կը մտնէին: Ինչո՞ւ շարունակած չէր:

Մայրիկը ձեռքի գործը սեղանին վերայ դրաւ, ու ձեռքը երեսին դրաւ: «Ասոր գոյնը աչքիս կը զննուէ:» ըսաւ: Միթէ այդպէս էր: . . Ո՛հ, խեղճ փոքրիկ թիմ...:

(Շարունակելի) (30)

صاحب الامتياز والمدير المستول
القس ق. هاروتونياني